ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

ՔԱՌՅԱՆ Ս. Մ.

Գրեթե հարյուր հիսուն տարի է, ինչ Հայկական հարցը արծարծվում է աշխարհի առաջադեմ մարդկության մեծագույն մտածողների կողմից, ինչպես նաև միջազգային և միջպետական բանակցություններում ու պայմանագրերում: Սակայն Հայկական հարցն իր սկզբնավորման օրից մինչև հիմա լուծում չի ստացել: 1914 թ. լույս տեսած «Լսենք ու պաշտպանենք» հրապարակախոսական հոդվածում մեծն Թումանյանը հարցնում է. «Արդյո՞ք մի որևէ ձևով վճռվեց Հայկական հարցը: Արդյոք վերացա՞վ տաճկահայ ամբողջ կյանքի ու մեր հոգու վրից էդ կարմիր մղձավանջը, և կարո՞ղ ենք այսուհետև հանգիստ սրտով նվիրվել կուլտուրական աշխատանքի և ավելի լայն խնդիրների»[1]: Հանճարեղ լոռեցին չի կարողանում պատասխան գտնել իր առաջադրած հարցին, և դա այն դեպքում, երբ համազգային խնդիրները լուծելու համար ժամանակակիցները հաշվի էին առնում նրա կարծիքն ու գաղափարները:

«Ապաշավանք» հրապարակման մեջ բանաստեղծը հեգնանքով նշում է. «Ներեցեք մեզ, ո՛վ քրդեր, ո՛վ թուրքեր, որ 1878 թվականին մենք գնացինք Բեռլին ու գանգատվեցինք ձեր կատարած կողոպուտների, բռնությունների, սպանությունների, հրդեհների ու ավերումների դեմ՝ ձեզ անվանելով բարբարոսներ ու գազաններ, իսկ նրանց՝ մարդասեր դատավորներ»[2]: Այս ամենը կարծես ասված է հենց այսօրվա հայ-թուրքական հարաբերությունների ու դրանց առնչվող հարցերի մասին:

Հովհ. Թումանյանը զարմանալի ճշգրտությամբ էր կանխատեսում Մեծ եղեռնը, իր ժողովրդի դառը ճակատագիրը: Բանաստեղծը զգում էր Հայկական հարցի հետագա զարգացումները՝ դրանք մատնանշելով դեռևս 1914 թ. գրած «Սրանով կհաղթես» հոդվածում: Նա կարծում էր, որ ով էլ զբաղվի Հայկական հարցով, այնուամենայնիվ, ելակետից այն կողմը չի կարող անցնել: Թվարկելով այդ հարցն արծարծող աշխարհի մեծերին՝ միաժամանակ նշում է. «Նրանց հետևից էլ Աբդուլ Համիդի դաժան դեմքն է երևում ստվերում»[3]:

Հովհաննես Թումանյանն ազգային առաջնորդ դարձավ՝ իր գործունեության մեջ ներառելով հայ կյանքի բոլոր ոլորտները, դրանց գեղարվեստական արտացոլումները տալով իր գրականության մեջ: Որպես ազգային ճշմարիտ ու անձնվեր գործիչ՝ Թումանյանն այն տեսակետն ամրապնդեց, որ մեծ գրողը, մտավորականը չի կարող ապրել ազգային կյանքից ու խնդիրներից կտրված, չի կարող ան-

---

[1] **Հովհ. Թումանյան,** *Երկերի ժողովածու, Ե., 1954, հ. 4, էջ 212:*

[2] *Նույն տեղում, էջ 218-219:*

[3] *Նույն տեղում, էջ 224:*

հաղորդ մնալ այն ողբերգություններին, որոնք բաժին են հասել իր ժողովրդին: Այդ ողբերգություններն ու ժողովրդի կյանքում տեղի ունեցող իրադարձությունները պատկերելու, ինչպես նաև իր քաղաքական կողմնորոշումները արտահայտելու համար նա դիմում էր գրականության ամենատարբեր սեռերին ու ժանրերին՝ ձգտելով հասնել իր ասելիքի և գաղափարախոսության ամբողջական բացահայտումներին, իր հայրենասիրական և քաղաքական դիրքորոշումների հայտածումին:

Հովհաննես Թումանյանի մասին ժամանակին շատ մենագրություններ ու հոդվածներ են գրվել, այսօր էլ շատ հոդվածներ ու գրքեր են գրվում, բայց հաճախ չի բացահայտվում բանաստեղծի՝ խնդրո առարկա հարցի նկատմամբ նրա մոտեցումների բուն էությունը: Այս անգամ խոսքը վերաբերում է Հովհաննես Թումանյանի «Հայկական հարցը ու իր լուծումը» հայտնի հրապարակմանը: Հենվելով սովորական ուժ ստացած տեսակետների, ավելի ճիշտ, XX դ. հայ կյանքի մի շարք երևույթների մեկնաբանությունների վրա՝ գրեթե բոլոր հեղինակները նշում են միայն այդ հոդվածի առանձին հատկանիշների մասին՝ բաց թողնելով էականը՝ Հայկական հարցի լուծման ուղիների մշակումը: Թումանյանը Արևմտյան Հայաստանի հարցի լուծումը տեսնում էր թուրքահպատակ ժողովուրդների ընդհանուր ազատագրության մեջ, սակայն դրա համար բավարար պայմաններ չկային. թուրքահպատակ ժողովուրդների միջև չէր ստեղծվել ընդհանուր պայքարի ոգի, շարժման ընդհանուր քաղաքական-սոցիալական նպատակներ: Ուստի, Թումանյանը դժվարանում էր տալ նաև այդ հարցի լուծման ուղիները:

Քանի որ փոքր ժողովուրդները ցրված էին Թուրքիայի ողջ տարածքում, իսկ հույները՝ իրական ուժը, գերազանցապես գտնվում էին երկրի մի ծայրում, բուլղարները՝ Եվրոպայում, հրեաները տարածված էին երկրով մեկ, քրդերը քոչվոր էին, դրա հետևանքով էլ այդ միասնությունը չկայացավ: Նաև այս հանգամանքները նկատի ուներ բանաստեղծը, երբ գրում էր. «Հայերը երբեք քաղաքական նպատակներ չեն սնուցած: Կյանքի ապահովություն, աշխատելու և իրենց ազգային մշակույթը պահելու իրավունք. այս ամենը կազմել են, այսօր էլ կազմում են իրենց միակ փառամոլությունը»[4]: Իսկ XX դ. սկզբին Թուրքիայում ասպարեզ եկած երիտթուրքերը շարունակեցին Աբդուլ Համիդի քաղաքականությունը, առավել խարդախ ու դաժան մեթոդներով՝ հաշվի չնստելով հայի համեստ պահանջների հետ:

Սույն հրապարակման մեջ Թումանյանը վերլուծում էր փաստերը և բնաջնջվող հայ ժողովրդի համար ելք էր փնտրում: Նա կարծում էր, որ ժողովրդին խոսքով չես կերակրի, և ցավով նշում, որ փոքրաթիվ ժողովուրդը չի կարող բռնակալության դեմ դուրս գալ ու հաղթել: Նա գրում էր, որ առանց դրսի օգնության բոլոր ձեռնարկումները մահվան են դատապարտված, իսկ այդ օգնությունը նա տեսնում էր Ռուսաստանի կողմից: Միաժամանակ, պատասխան էր

[4] *Նույն տեղում, էջ 226:*

տալիս հակառուսական տրամադրություններով համակված այն անձանց, որոնք պնդում էին, թե Ռուսաստանը հետապնդում է լոկ իր շահերը, և ինքն էլ իր համոզմունքն էր հայտնում, թե շատ լավ է, որ մեր շահը համընկնում է հզոր Ռուսաստանի շահերի հետ, ապա հիմնավորում էր դրա առավելությունները: «Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու գաղթականությունների հարց է: Այն գերազանցապես ֆիզիկական գոյության խնդիր է: Եվ նրա հաջողությունը միշտ կախված է եղել Ռուսաստանի հաջողությունից:

Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել Հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանություններին ու հայկական սարսափներին: Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պատմության առաջ»[5]:

Մանրամասնորեն կանգ առնելով եվրոպական մեծ տերությունների դիրքորոշման վրա՝ Թումանյանը ի վերջո հանգում է այն եզրակացության, որ Անգլիան վճռական պահին Թուրքիայի հետ է և Ռուսաստանի դեմ, իսկ եթե Ռուսաստանի դեմ է, բնականաբար, դեմ է հենց Հայկական հարցին: Այստեղ Թումանյանը փայլում է դիվանագիտական խաղերի հրաշալի ընկալման և վերլուծության, երևույթի խորքային դրսևորումներն ըմբռնելու կարողությամբ: Ավելին, վերլուծելով իրականությունը՝ Թումանյանը կարծես դաս է տալիս ապագա դիվանագետներին, հուշում և զգուշացնում: Եթե Առաջին հանրապետության առաջնորդները շրջահայաց լինեին և խորապես հասկանային Թումանյանի մտքերը, ապա նորաստեղծ պետությունը չէր ներքաշվի նոր ու ստորացուցիչ դիվանագիտական խաղերի մեջ, չէին լինի Ալեքսանդրապոլի և Կարսի պայմանագրերը, բովանդակային այլ հենք կունենար Մոսկվայի պայմանագիրը:

«Մենք զարմացանք Բեռլինում կատարված էս ֆարսի վրա, թե ինչպես 16-ը դարձավ 61, ուրախացանք, որ դարձանք 6 մեծ պետության հոգածության առարկա և Բեռլինից գնացինք Լոնդոն, էնտեղ էլ տեսանք ինչ գեղեցիկ ճառեր են ասում...»: Բանաստեղծը ցավով է նշում, որ «…տաճկահայ ժողովուրդն իր հարցով նույնպես եղել է եվրոպական պետությունների հակամարտության դժբախտ զոհերից մեկը, և անպայման ամենադժբախտը»[6]:

«Երեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը» հոդվածում մանրամասն նկարագրելով ռուս ժողովրդի և ռուսական զինվորականության վերաբերմունքը հայերի նկատմամբ՝ եզրակացնում է, որ «մենք հավատում ենք ռուսական պետությանը»: «Ռուսական մեծ պետությունը չի հրաժարվիլ Արևելքի մորթվող ժողովուրդներին պաշտպանելու սրբազան ավանդույթներից և հենվելով միջազգային դաշնագրերով իր ունեցած իրավունքների ու պար- տականությունների վրա՝ կարտասանի իր «Не бойтесь»-ը. մենք

[5] *Նույն տեղում, էջ 172-173:*

[6] *Նույն տեղում, էջ 169-171:*

կյանքի փորձով գիտենք ու հավատում ենք էդ մեծ ուժին ու կենդանի զգացմունքներին և հավատում ենք, որ նա վերջ կդնի հայ ժողովրդի էս անվերջ կոտորածներին, վայրենի ժողովուրդների անվերջ բարբարոսությանը, քաղաքակիրթ աշխարհի էս անվերջ խայտառակությանը»[7]:

Ամենայն հայոց բանաստեղծը չէր կարող չանդրադառնալ նաև մի այլ՝ «ծեծկված» հարցի՝ հայ կամավորության և Ազգային բյուրոյի խնդրին՝ կապված Առաջին աշխարհամարտի և Թուրքիայի հայաջինջ քաղաքականության հետ: Չափազանց միամիտ է այն միտքը, թե կամավորական շարժումը եղավ 1915 թ. Մեծ եղեռնի պատճառը: Հույսով ապրող հայ ժողովուրդը չէր կարող չբոցավառվել հայրենասիրական կրակով, երբ քրիստոնյա Ռուսաստանը պատերազմ էր հայտարարել Թուրքիային և հանդես էր գալիս հավատակից ժողովրդի փրկության լոզունգով: 1915 թ. մայիսի 21-ին «Հորիզոնում» հրապարակված «Զգաստություն» խորագրով հոդվածը շատ որոշակի ցույց էր տալիս, որ Ազգային բյուրոյում իշխում էր անմիաբանությունը, իսկ հայկական քաղաքական շրջաններում կարևոր հարցերում բացակայում էր միակարծությունը: Հովհ. Թումանյանը զգուշացնում էր այդ խիստ վտանգավոր երևույթից ու պահանջում էր զգաստություն: Որպես Բյուրոյի հիմնադիրներից մեկը՝ նա քաջատեղյակ էր զարգացող իրադարձություններին և զգում էր այդ պատերազմի վտանգավորությունը մեր ժողովրդի համար: Նա կանխատեսում էր վտանգը և համերաշխության ու միաբանության կոչ էր անում. «Եթե մենք մի ժողովուրդ ենք, որ արժանի ենք ավելի լավ օրերի ու ապագայի, պետք է սնունդ ու ծավալ չառնեն անմիաբանության վատ ջանքերը մեր մեջ՝ մեր սրբազան ձգտումի վայրկյանին»: Նա պահանջում էր բոլոր ուժերը ծառայեցնել միայն հաղթանակի համար, կազմել «կուռ միություն» մեծ պատերազմի հանդեպ՝ մեծ ապագա ստեղծելու համար»:

Թումանյանի տագնապներն իրականություն դարձան. Առաջին աշխարհամարտում սկսվեց փոքր ժողովուրդների սպանդը: Նշենք, որ ազգային տառապանքին զումարվեցին նաև անձնական ողբերգությունները: 1914 թ. պատերազմն ու 1915 թ. եղեռնը, գաղթն ու հետագա աղետները, ավելի առաջ հոր մահը, եղբայրների մահերը նրան արդեն խեղճացրել էին, սակայն վերջինը՝ Արտիկի կորուստը, «մեջքը հանկարծ կոտրեց»[8]: «Եվ այնուամենայնիվ, այս խորը ցավերի մեջ, իր կյանքի նկատմամբ անհույս բանաստեղծը ուժ էր գտնում ծառայելու իր հայրենիքի դժվար վերածնությանը»[9]:

1915 թ. իրադարձությունները խաչ քաշեցին Արևմտյան Հայաստանի վրա. աշխարհի քարտեզից հանվեց մի հինավուրց երկիր, XX դ. սկզբին գրեթե բնաջնջվեց հազարամյակների միջով անցած ու պատմական բոլոր փորձությունները հաղթահարած մի ժողովուրդ,

---

[7] *Նույն տեղում, էջ 138:*

[8] **Թումանյան Ն.,** *Հուշեր և զրույցներ, Ե., 1969, էջ 170:*

[9] **Թամրազյան Հր.,** *Հովհ. Թումանյան, Բանաստեղծը և մտածողը, Ե., 1995, էջ 465:*

որի միայն մի մասին հաջողվեց փրկվել: Ողբերգական իրադարձությունների ծավալումը չկարողացան կանխել ոչ հայ ժողովրդի լավագույն զավակների հրապարակումներն ու կոչերը, ոչ աշխարհի առաջադեմ մտածողների դատապարտող ելույթները, ոչ էլ առանձին հատվածներում կայացած հերոսամարտերը: Տապալվեց նաև ազգային կուսակցությունների քաղաքականությունը՝ որևէ պաշտպանություն չգտնելով միջազգային դիվանագիտության կողմից:

Զարմանալի պայծառատեսություն ուներ մեծ բանաստեղծը, և նույնիսկ այն ժամանակ, երբ եղեռնը արդեն իրողություն էր դարձել, նա գրում էր. «Էս ամենը լավ պետք է իմանա ամեն մի հայ ու միշտ հիշե, ոչ ոք հուսահատի ու վհատի խոսքեր չպետք է անի, որ հատուկ է ձախորդ վայրկյանին, փորձությունը, ինչքան էլ մեծ լինի, պետք է տանենք արիությամբ ու վեր կենանք միասին, միահամուռ ուժերով դիմագրավելու մեր վատթար թշնամիներին և դարման տանենք ընդհանուր ազգային աղետին հանգիստ ու լիքը՝ մոտիկ լավագույն ապագայի անսասան հավատով»[10]: Թումանյանի անսահման լավատեսությունն ու հավատը հայ ժողովրդի «լավագույն ապագայի» նկատմամբ արտահայտություն է գտել նաև իր բանաստեղծություններում.

Մենք միշտ անսասան առաջ պիտի գնանք
Ինչքան մեր ճամբան լինի ահարկու:

Էականն այն է, որ Մեծ Լոռեցին հավատում էր հայ ժողովրդի վաղվա օրվան և նշում, որ անհնար է միշտ լույսին, բարուն, ազնըվական ու սուրբ բարձունքներին ծառայած մի ժողովուրդ վերանա աշխարհի երեսից: Նա պատրաստ էր դիմագրավել մեր ժողովրդի դեմ այդքան արհավիրքներ բերած ու ոճիրներ գործած «վատթար թշնամիներին», սակայն չարությամբ չէր լցվում. նրա ազնվական հոգում ոչ թե չարություն, այլ տիեզերական թախիծ ու ահռելի վիշտ կար:

Հովհաննես Թումանյանի կրտսեր գրչակից Հրանտ Մաթևոսյանը ճիշտ է նկատել. «Կործանման ու ողբերգական իրադարձությունների ժամանակակից՝ նա պիտի իր ժողովրդի ողբերգուն լիներ և էր: Իր ժամանակի և ոչ մի երևույթ չի կարող վկայել՝ թե իր բուն խորքերում նա չի եղել, իր ժամանակի ոչ մի օրը չի կարող ասել, թե չի հիշում նրան, ոչ ոք՝ ոչ օտարազգի սարսափահար պանդուխտը, ոչ մեռնող եղջերուն, ոչ աղոթքի չոքած ծերը՝ չի կարող կշտամբել, թե իր օրհասի պահին, իր վեհանալու հրաշքին նա ներկա չէր: Բայց նա այդ բոլորի ու ամենքի գերին չէր, իր կործանված հայրենիքի հետ՝ ատելության կաշկանդյալը չէր: Նա տեր էր այդ ամբողջի ու ամենի վրա, այդ ա մբողջն ու ամենը նրա տիրական ճախրի ներքո էր: Այդպես միայն զորավոր արծիվներն են լինում»[11]:

Հովհաննես Թումանյանը՝ պատմության քառուղիներում կանգ-

---

[10] **Հախվերդյան Լ.,** *Թումանյանը և իր ժամանակը, Ե., 1995, էջ 50:*

[11] **Հովհ. Թումանյան,** *Ընտրանի, Ե., 2001, էջ 10:*

նած հզոր անհատականությունը, կա ու կմնա որպես հայ ժողովրդի ու աշխարհի հանճարեղ բանաստեղծներից ու մտածողներից մեկը: Նրա մեծությունը ոչ միայն նրա ստեղծագործությունն է, որն արտացոլում է ազգային գրականության անհասանելի ձեռքբերումներն ու թռիչքները, նոր ուղիներ բացում գեղարվեստական մտքի պատմության մեջ, այլև նրա քաղաքացիական ու մարդկային վեհ կեցվածքը, որը հատկապես ակներև դարձավ ազգային խնդիրներում ունեցած նրա մեծագույն մասնակցության մեջ:

АРМЯНСКИЙ ВОПРОС В ПУБЛИКАЦИЯХ О. ТУМАНЯНА

КАРЯН С. М.

Резюме

О. Туманян обращался к Армянскому вопросу как в своих художественных произведениях, так и в публицистике. Заслуживают внимания, в частности, те публикации поэта, в которых рассматриваются вопросы, связанные с его решением. Отмечая роль России в освобождении армянского народа, О. Туманян придерживался точки зрения, согласно которой, после Берлинского конгресса в условиях противостояния России Европе западные армяне стали жертвой именно этого противостояния. Идею национальной консолидации О. Туманян противопоставлял опасностям, которыми чревата была Первая мировая война.